Ընդունված է

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի

Հոգաբարձուների խորհրդի

21.10.2025 թվականի թիվ 39 որոշմամբ

ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. Վարքագծի կանոնագրքի կիրառության շրջանակը 3

Հոդված 2. Ջանասիրությունը և ձեռնհասությունը 3

Հոդված 3. Անկախությունը և անկողմնակալությունը 3

Հոդված 4. Գաղտնիությունը 4

Հոդված 5. Հաշտարարության իրականացումը 5

Հոդված 6. Խորհրդատվությունը 6

Հոդված 7. Հանրայնացումը և գովազդումը 6

Հոդված 8. Բողոքները 7

Հոդված 9. Կենտրոնի կողմից հաշտարարի փոխարինումը 7

ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Հոդված 1. Վարքագծի կանոնագրքի կիրառության շրջանակը

1. Հաշտարարը, «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից վարվող հաշտարարության գործով որպես հաշտարար հանդես գալիս, պետք է գործի Կենտրոնի Հաշտարարության կանոններին (այսուհետ՝ Կանոններ) և Հաշտարարների վարքագծի սույն կանոնագրքին (այսուհետ՝ Կանոնագիրք) համապատասխան:

Հոդված 2. Ջանասիրությունը և ձեռնհասությունը

1. Հաշտարարը պետք է ընդունի որպես հաշտարար հանդես գալու առաջարկը միայն այն դեպքում, երբ ունի հաշտարարության իրականացման համար անհրաժեշտ ձեռնհասություն: Որպես հաշտարար հանդես գալու առաջարկն ընդունելով՝ հաշտարարը հավաստիացնում է Կենտրոնին և կողմերին, որ ունի արդյունավետ հաշտարարության իրականացման համար պատշաճ ջանասիրություն:
2. Հաշտարարը պետք է երաշխավորի, որ ունի կողմերի ողջամիտ ակնկալիքները բավարարելու համար անհրաժեշտ ժամանակ, ներուժ և փորձառություն՝ ինչպես ընթացակարգային, այնպես էլ վեճի նյութական հարցերի առնչությամբ:
3. Եթե հաշտարարը հաշտարարության գործընթացի որևէ փուլում գտնում է, որ ինքն ի վիճակի չէ հաշտարարությունը պատշաճ կերպով իրականացնելու, կամ, եթե առկա են այլ հանգամանքներ, որոնք կարող են ազդել հաշտարարությունն արդարացի, արդյունավետ և անկողմնակալ կերպով իրականացնելու իր կարողության վրա, ապա այդ մասին նա պարտավոր է անմիջապես տեղեկացնել Կենտրոնին: Այս հանգամանքը կարող է հանգեցնել Կանոններով սահմանված կարգով հաշտարարի փոխարինմանը:

Հոդված 3. Անկախությունը և անկողմնակալությունը

1. Հաշտարարը պարտավոր է հաշտարարության ամբողջ գործընթացում պահպանել անկողմնակալություն՝ թե՛ իր խոսքում, թե՛ գործողություններում դրսևորելով նախապատվությունից կամ կողմնապահությունից զերծ վարքագիծ: Նրա հանձնառությունն է հաշտարարության բոլոր կողմերի նկատմամբ ցուցաբերել հավասար վերաբերմունք՝ առանց որևէ կողմին նախապատվություն տալու: Եթե հաշտարարն անկարող է պահպանել

անկողմնակալություն, ապա այդ մասին պետք է անհապաղ տեղեկացնի Կենտրոնին և կողմերին։

2. Կողմնակալություն թույլ չտալու համար հաշտարարը պետք է գիտակցի և խուսափի կողմերի նկատմամբ ռասայով, տարիքով, ազգությամբ, սեռով, քաղաքացիությամբ, ծագմամբ, անհատական հատկանիշներով, արժեքներով և համոզմունքներով, հաշտարարության ընթացքում դրսևորած վարքագծով կամ ցանկացած այլ հանգամանքով պայմանավորված հնարավոր կանխակալությունից։ Հաշտարարը պետք է ձգտի ապահովել հաշտարարության գործընթացի արդարացիությունը՝ երաշխավորելով, որ յուրաքանչյուր կողմ ունենա գործընթացին լիարժեք մասնակցության բավարար հնարավորություն։
3. Հաշտարարը պետք է զերծ մնա կողմի կամ փաստաբանի հետ ցանկացած շփումից, որը կարող է խաթարել հաշտարարության գործընթացի ամբողջականությունը՝ բացառությամբ, երբ հաշտարարության բոլոր կողմերը տեղեկացված են և տվել են իրենց համաձայնությունը։ Նշվածը չի խոչընդոտում հաշտարարին մասնակցելու այլ գործերով հաշտարարության կամ վեճի լուծման այլ գործընթացի, որում ներգրավված է իր նախորդ հաշտարարության գործերով կողմը կամ փաստաբանը։
4. Հաշտարարը պարտավոր է մշտապես զգոն լինել՝ խուսափելու իրական կամ ենթադրյալ շահերի բախման իրավիճակներից, որոնք կարող են կասկածի տակ դնել իր անկողմնակալությունը կամ անկախությունը։ Շահերի բախման իրավիճակներ կարող են առաջանալ, ի թիվս այլնի՝

   1) **Կողմի հետ փոխկապակցվածությունից,** որը ներառում է ցանկացած ներկա կամ նախկին անձնական, մասնագիտական, գործարար կամ ֆինանսական հարաբերություններ որևէ կողմի, այդ թվում՝ նրանց փաստաբանների կամ փոխկապակցված անձանց հետ, որոնք ողջամտորեն կարող են ընկալվել որպես հաշտարարի օբյեկտիվության վրա ազդող հանգամանքներ։ Նույնիսկ հեռավոր առնչությունները/կապերը պետք է բացահայտվեն, եթե դրանք կարող են կասկածներ առաջացնել հաշտարարի անկողմնակալության վերաբերյալ։

   2) **Վեճի առարկայի հետ առնչությունից։** Շահերի բախման իրավիճակներ կարող են առաջանալ նաև այն դեպքերում, երբ հաշտարարը ունի անձնական կամ մասնագիտական շահ վեճի առարկայի նկատմամբ։

Հոդված 4. Գաղտնիությունը

1. Հաշտարարը պարտավոր է պահպանել հաշտարարության ողջ գործընթացին առնչվող տեղեկատվության գաղտնիությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ

հաշտարարը օրենքով պարտավոր է բացահայտել դրանք, կամ առկա է նման տեղեկատվության հրապարակման վերաբերյալ կողմերի գրավոր համաձայնությունը: Գաղտնիության պահպանման պարտականությունը ենթադրում է նաև, որ հաշտարարը պետք է ձեռնպահ մնա հաշտարարության մասնակից չհանդիսացող որևէ անձի հաշտարարությունից առաջ, ընթացքում կամ հետո ներկայացված տեղեկություններ կամ փաստաթղթեր բացահայտելուց:

2. Հաշտարարը իրավունք չունի հաշտարարական գաղտնիք համարվող տեղեկատվության հետ կապված ապացույցներ ներկայացնելու կամ ցուցմունք տալու դատական, վարչական, արբիտրաժային կամ ցանկացած այլ վարույթում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
3. Հաշտարարը, պարտավորությունների կատարման անհնարինության, իր անկախության կամ անկողմնակալության նկատմամբ ողջամիտ կասկած հարուցող հիմքերի ի հայտ գալու, կամ Կանոնագրքի ենթադրյալ խախտումների դեպքերում պարտավոր է այդ մասին հայտնել Կենտրոնին՝ անկախ նրանից, թե այդ տեղեկատվության մասին վերջինս իմացել է հաշտարարության գործընթացից առաջ, ընթացքում, թե հետո:

Հոդված 5. Հաշտարարության իրականացումը

1. Հաշտարարը պարտավոր է հաշտարարությունն իրականացնել կիրառելի օրենսդրությանը, սույն Կանոնագրքին և Կենտրոնի Հաշտարարության իրականացման ուղեցույցին համապատասխան:
2. Հաշտարարը պետք է կողմերին աջակցի հստակ, կենսագործելի և փոխադարձ ընդունելի պայմաններով հաշտության հասնելու հարցում: Կողմերի խնդրանքով հաշտարարը կարող է աջակցել հաշտության համաձայնության գրավոր ձևակերպմանը՝ հավաստիանալով, որ համաձայնության պայմանները արտահայտում են կողմերի իրական կամքը: Այնուամենայնիվ, հաշտարարը չի կարող հանդես գալ որպես իրավախորհրդատու կամ կազմել պարտադիր իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթեր՝ բացառությամբ, եթե վերջինս կիրառելի իրավունքին համապատասխան դրա համար հատուկ լիազորված կամ որակավորված է: Հաշտարարը պարտավոր է հավաստիանալ, որ հաշտության համաձայնությունը ստորագրող անձինք հասկանում և ընդունում են հաշտության համաձայնության պայմանները:
3. Հաշտարարը, անհրաժեշտության դեպքում, առանց իրավաբանական խորհրդատվություն առաջարկելու, կարող է առաջարկել կողմերին հաշտության համաձայնությունը ձևակերպել այնպես, որ երաշխավորվի դրա կատարումը: Այն կարող է ներառել ներպետական օրենսդրությամբ գործող

մեխանիզմները, կամ, կիրառելի լինելու դեպքում, միջազգային փաստաթղթերը, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ի Հաշտարարությամբ հաստատված միջազգային հաշտության համաձայնությունների մասին կոնվենցիան (Հաշտարարության մասին Սինգապուրի կոնվենցիա)։

4. Հաշտության համաձայնության վերջնական վերանայման, իրավական ուժ ունենալու և կատարման ենթակա լինելու պատասխանատվությունը կրում են կողմերը և նրանց ներկայացուցիչները։ Հաշտարարը պարտավոր է ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու, որ բոլոր կողմերը հասկանան հաշտարարության ընթացքում ձեռք բերված ցանկացած համաձայնության բնույթը։
5. Հաշտարարը պետք է խուսափի հաշտարարության գործընթացն անհարկի ձգձգելուց, եթե գտնում է, որ հաշտարարության միջոցով հաշտության համաձայնության հասնելու ողջամիտ հնարավորություն չկա։
6. Հաշտարարության գաղտնիությունն ու աշխատանքային միջավայրն ապահովելու համար հաշտարարության բոլոր հանդիպումները պետք է անցկացվեն Կենտրոնում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորված պատճառներով Կենտրոնի, հաշտարարի և կողմերի միջև այլ համաձայնություն է ձեռք բերվել: Ամեն դեպքում, եթե հանդիպումներն անցկացվում են Կենտրոնի տարածքից դուրս, ապա հանդիպման համար ընտրված վայրը պետք է ապահովի գաղտնիություն (ներառյալ հաղորդակցության), հաշտարարության գործընթացին համապատասխանություն և բավարար պայմաններ՝ ներառյալ առանձին հանդիպումներ անցկացնելու հնարավորությունը:

Հոդված 6. Խորհրդատվությունը

1. Հաշտարարը պետք է զերծ մնա որևէ կողմին իրավական, հոգեբանական, ֆինանսական կամ այլ խորհրդատվություն տրամադրելուց և պետք է հստակեցնի, որ իր դերը չեզոք միջնորդի դեր է, այլ ոչ թե որևէ կողմի ներկայացուցչի կամ փաստաբանի։ Սա հատկապես կարևոր է ներկայացուցիչ չունեցող կողմերի հետ առնչվելիս, երբ հաշտարարը պետք է ընդգծի հաշտարարության ընթացքում հաշտարարի դերի սահմանափակումները։ Ըստ անհրաժեշտության՝ հաշտարարը կարող է կողմերին առաջարկել դիմելու մասնագիտական խորհրդատվության։

Հոդված 7. Հանրայնացումը և գովազդումը

1. Հաշտարարը Կենտրոնի անունից որևէ մարքեթինգ կամ գովազդ իրականացնելիս պետք է նախապես ստանա Կենտրոնի համաձայնությունը և զերծ մնա հաշտարարության գործընթացին վերաբերող գաղտնի

տեղեկատվությունը հրապարակելուց:

2. Հաշտարարը պետք է ստուգի իր անունից իրականացվող գովազդային կամ մարքեթինգային ցանկացած գործողության ճշգրիտ լինելը՝ ապահովելով դրանց հավաստիությունը և միաժամանակ պահպանելով հաշտարարությունների ընթացքում ստացված ամբողջ տեղեկատվության գաղտնիությունը: Արգելվում է մոլորեցնող կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության հանրայնացումը կամ գովազդումը:
3. Հաշտարարը չպետք է որևէ արդյունք երաշխավորի, հատկապես, երբ նման հավաստիացումը կարող է մեկնաբանվել որպես որևէ կողմի նկատմամբ կողմնակալության դրսևորում:

Հոդված 8. Բողոքները

1. Հաշտարարը կարող է դիմել Կենտրոնին՝ հաշտարարի վարքագծի կամ էթիկայի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար:
2. Կանոնագրքի ենթադրյալ խախտման վերաբերյալ գրավոր դիմում կարող է ներկայացվել Կենտրոնին՝ մանրամասնելով հաշտարարի գործողությունները (անգործությունը), ինչը Կենտրոնը կարող է փոխանցել Կենտրոնի Հաշտարարության խորհրդատվական խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ)՝ ենթադրյալ խախտումների վերաբերյալ կարծիքի, մեկնաբանության և/կամ եզրակացության համար: Հաշտարարը պարտավոր է ցանկացած բողոքի քննարկման գործընթացում լինել համագործակցային:
3. Այն դեպքերում, երբ Խորհրդի մեկնաբանություններից պարզ է դառնում, որ հաշտարարի կողմից թույլ է տրվել Կանոնագրքի խախտում, ապա Կենտրոնը կարող է հաշտարարին հեռացնել իր հաշտարարների ցանկից, կամ դիմել իրավասու մարմնին (Հաշտարարների պալատին)՝ օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ հարուցելու նպատակով:

Հոդված 9. Կենտրոնի կողմից հաշտարարի փոխարինումը

1. Կենտրոնն իրավունք ունի հաշտարարության ցանկացած փուլում փոխարինելու հաշտարարին, եթե գտնում է, որ հաշտարարը անկարող է իր պարտականությունները կատարել պատշաճ կամ անկողմնակալ կերպով, կամ այլ կերպ անկարող է հաշտարարությունը շարունակել:
2. Կենտրոնը Կանոններով սահմանված կարգով կարող է փոխարինել

հաշտարարին նաև այն դեպքում, երբ բոլոր կողմերը հաշտարարին հեռացնելու մասին համատեղ գրավոր դիմում են ներկայացնում՝ վկայակոչելով ողջամիտ հիմքեր, ինչպես օրինակ՝ շահերի բախման իրավիճակի առկայություն կամ վստահության կորուստ։

3. Հաշտարարության գործընթացի ամբողջականությունը, ներառյալ հաշտարարի չեզոքության և ձեռնհասության նկատմամբ կողմերի վստահությունը, պետք է լինի հաշտարարին փոխարինելու վերաբերյալ բոլոր որոշումների կայացման հիմքում։